


Վրայ Հայոց Ս. Ստեփանոս վանքը կանգուն էր մինչև 1334 թուականն, և վերագոյն յիշուած անանուն սլաւ ուղեգիրքի համաձայն, նոյն վանքը անջնաս մնացած էր 1370 թուականին, ժերգ. դարուն: Ս. Աթոռս ընդօրինակուած Տաղարանի մը յիշատակարանին մէջ, ի շարս ազգային ուխտատեղեաց, ընդօրինակող ներսէս երէց չի յիշատակեր Ս. Ստեփանոսի վանքը (Նօտարք Հայոց 18-19), հետեւարար անքանդուած կ'ըլլայ 1360—1447 թուականը, մեզ անյայտ պատճառներով: 1483'ին միայն Անկիւրիոյ Նիկողայոս եպիսկոպոսը՝ իր կազմած Ս. Տեղեաց ցուցակին մէջ, կը յիշէ Սիոնի կողմը, իբր ուխտատեղի «Ս. Ստեփանոսի գերեզմանը», և յիշեալը զանց չ'ընենք յիշատակել նաև Ս. Քաղաքի պարիսպէն դուրս նախաՎկային միւս ուխտատեղին հետեւեալ բառերով. «Եւ յերուսաղիմայ եզերն՝ Գամաղիէլի և Ս. Ստեփանոսի Գերեզմանն»:

Օտար և ազգային այս յիշատակարանաց ամփոփումը անհերքելի կը դարձնէ Սիոնի վրայ Հայոց Ս. Ստեփանոսի վանքին գոյութիւնը, և որ իբր քրիստոնէական բարեպաշտութեան մը յիշատակարանը եղած է զարեբով: Այս պահուս, որ այս ատղերը կը գրեմ, աչքերս նախաՎկային աւերակին կողմը կը նային և միտքս կը հասկնայ անոր անխօս լեզուն. և կը բատիպուիմ աչքերս յառել երկինք գոչելով. ո՛վ Տէր, պարգեւէ՛ մեզի նոր Ամատունիներ, որ վերաշինեն այս աւերեալ վանքը քարկոծեալ նահատակին, որուն դարերով բախտակից եղած է հալածական Հայ ժողովուրդը:

ՄԿԻՐՏԻՉ ԵՊՍ. ԱՂԱԻՆՈՒՆԻ



ԿԱՐԴԱՅԷ՛Ք

Եւ առաջին առքիս դիկեցէք մեր ՍԻՈՆԻ բաժնեգիրը, եթէ չէք դրկած:

ԽՐԻՍՏԵԱՆ ՀԱՅՐԻԿ ԵՒ ՍԻՈՆ

Սիոնի վերսին հրատարակութեան վաղուց ջերմ փափաքողներէն մէկը եղած է Խրիմեան, իբրև մօտէն ծանօթ երեսօղէմի Հայ Պատրիարքութեան պայմաններուն:

Հետեւեալ նամակը ուղղակի իր գրչէն եւ ուղղուած Մամբրէ Եպս. Մարկոսեանի, գրուած է 1898-ին երբ Խրիմեան այցելեց Պատւ և Սիոնի վերհրատարակութեան նախար պայմանօրէն, բաւ Մեքուպ Եպս. Նաթեանի սեղեկութեան, ծանօթ դրամատէր Իսովանճիօ օժանդակութիւնը:

Նամակը շատ շանկեալ է. որովհետև Խրիմեան մօտէն կը նամակայ Յարութիւն պատրիարք և Տիօթն ժողովրդու իր բախանիս անդամին բերանը կը դնէ բարացուցական արտայայտութիւն մը կարծիքներու: Եւ վերջապէս նկատն խոստումով մը, տարեկան 500 ռուբլի, կ'երաշխարէ Սիոնի հրատարակութիւնը:

Այս նամակին մէջ յայտնէ յանտանէ յիշուած անձերէն իրիկիկոյ Ս. Կարողիկոսը ողջ է միայն, :

Մ. Ե.

Քաջարան Ասկնախօս

Տ. Մամբրէ Մրքապան .

Ձքեզ կը կացուցանեմ փոխանորդ Հայոց Հայրիկին. մո՛ւտ ի դիւան Երզնրդարանի Սրբոյ Երուսաղէմի. խօսք Տէր Մամբրէ Մրքապանին է՝ հրամանաւ Հայոց Հայրապետին. եւ զու գոչեալ՝ զօրութեամբ և մի՛ խնայեր, բարձրացո՛ իբրև փողոյ ըզբարբառ քո: Ահա քո բնարանն:

«Վասն Սիոնի ոչ լուցից և վասն Երուսաղէմի ոչ ներեցից»:

Այնուհետև զու շարէ փաստարանէ, վասն Սիոնի կրկնակի հրատարակութեան, եթէ մեռեալ և թաղեալ Սիոն հրաման տուր որ զվէմն ի բաց առնուն, ևւ զու յայնժամ գոչեալ բարձրարբառ, արի՛ եկ արտաքս ո՛վ Սիոն, հերիք եղև քեզ ննջել ի տապանիզ անխօս անբարբառ:

Դու լուէ, բա՛ւ է այդչափ. խօսք Տէր Յարութիւն Սրբապանին է.

է՛, Տէր Մամբրէ Սրբապան, ո՞ ետ քեզ զայդ համարձակութիւն, որ այդպէս խիզախ ձողումարանես. հազիւ այդ փորձանք Սիոն թաղած եմք, զու զայն կրկին ի դուրս հանես. զու շէ՞ս ձանաչեր ժամանակ ևւ փորձանք իւր: Թող այդ «ի կալո՞յ թէ ի հնձանէ»: Է՛ Հայր Առնոյ հաշիւ ցոյց տուր. մեր Միարանութիւն, միայն առանց հաշ-

ուր ուսուցիչ գիտէ. ա՛նպիսի պարտք ուղարկ  
չափ հեծեր է վզին վերայ եւ տակ կը ճրմ-  
լուիմ, Սիօնի այդ բեռն էլ կը յաւելուիք  
վերայ: Էդ անհաշիւ մարդ, Հայրի՛կ է Ինչ  
է, նստեր յԱյրարատ, խօսում է Երուսա-  
ղէմ: Նա Ինչ իշխանութիւն ունի փոխա-  
նորդ կարգելու, հրաման արձակելու, եւ  
մինչև անգամ մեր հազար բուրլին իբրև  
գրաւ պահելու: Հայոց Հայրապետ ծներ  
(գժացեր) է. նա զուցէ կարծում է Երու-  
սաղէմի մէջն եւ իշխելու. նա դեռ երէկ աք-  
սոր էր այս տեղ եւ եւ փակեր էի գինքն  
Մակարայ խուցի մէջ, որչափ հեզ էր իւր  
անձկութեան մէջ, այժմ գիտես թէ առիւծ  
է դարձեր գառապիղէն դուրս ելած: Դա  
զուցէ ձայն տայ Արարատեան Ասքանադ-  
եան գնդին եւ պատերազմ հրատարակէ.  
Նէ, միթէ եւ կը լռե՞մ, եւ էլ ձայն կու  
տամ բովանդակ մեր աշխարհի ֆէլլահեան  
գնդերուն եւ արշաւանք կը բանամ Սիօնի  
լեռնէն մինչև ի Մասիս: Էտ ուշամոռաց  
մարդ միթէ մոռցե՞ր է մեր ներսի դուրսի  
կոխը, զոր մղեցինք Պոլսեցւոց դէմ եւ  
յաղթանակ տարինք:

Խօսք Սահակ եպիսկոպոսին է.

Արբազան Տէր մի՛ այդչափ նեղանաք,  
եւ էնպէս համոզուած եմ, որ Հայրիկ տի-  
րապետելու հոգի չունի. նա էջմիածնայ  
Միաբանութեան չէ կարող տիրապետել,  
մեր մնաց Երուսաղէմին. նորա միտքն այն  
է որ մեր Միաբանութիւն որչափ կարելի  
է ազդի լուսաւորութեան եւ կրթութեան  
համար եւ ծառայէ: Սիօնի հրատարակու-  
թեան համար ոչինչ զժուարութիւն չիկայ,  
քանի որ մեր Մատենադարան շատ նիւթ  
կ'ընձեռէ մեզ. չեն պակաս նաեւ մեր  
Միաբանական դասուն մէջ բաւական զը-  
րողներ, մանաւանդ երբ նիւթականի մա-  
սին ինքն Հայրիկ կ'ապահովէ:

Խօսք Տէր Ներսէս եպիսկոպոսին է.

Արբազան Պատրիարք Հայր, եւ ձեր  
կարծիքին համաձայն եմ, մեր Սահակ ե-  
պիսկոպոս եղբայր, մեծ մեծ ջարդել գիտէ  
միայն, պատրաստել չգիտէ: Ինձ էնպէս  
կը թուի որ նա իւր յանցանք ծածկել կ'ու-  
զէ. դա չէ՞ որ գնաց էջմիածին քուէ ար-  
ուաւ այդ անփորձ մարդուն, որ այժմ մեր  
զլիւնն փորձանք եղած է: Ձեզ ամէնուզ  
յայտնի է, ճանչնանք ժամանակ. ուխտա-  
ւորներ պակասած են, ա՛հ, ուտող չի գի-

տեր, բրդող գիտէ. դուք չգիտէք եւ ինչ  
տանջանք կը քաշեմ, երկիրք, գետին,  
Ս. Գիրք, Սուրբ Տեղեր, արքայութիւն,  
գժոխք իբար խառնելով, մի ուխտաւորի  
համար հազար հազար բառ կ'արտասանեմ,  
հազիւ այդ ուխտաւոր խեղճ կիներուն  
քուրձերուն մէջ հանգուրցած դրամի կա-  
պոցներ կը քակեմ, դարպաս տուրք կը  
հանեմ: Ո՛չ, ո՛չ, եւ համաձայն չեմ Սիօնի  
ապարդիւն հրատարակութեան: Ապա թէ  
ոչ եւ հրաժարելով հրաժարում եմ դար-  
պասութեան էս ծանրատաղտուկ պաշտօ-  
նէն, որ հոգիս բերանս է բերեր. աշխատու-  
թիւնն վանուց համար է, բայց կը բամբաս-  
ուիմ իբրև անգութ խտտապահանջ մարդ:

Խօսք Անդրէաս վարդապետին է:

Ես չողեչոյ դալով ձեռներդ ոտներդ  
կը համբուրեմ Արբազան Հայր մեր. զիս  
ազատէ իմ մտերիմ բարեկամաց ձեռքէն,  
անուններ չեմ ի տար, դուք լաւ գիտէք.  
Ղօքս պարապմունք չունին, զորձ չունին,  
անկեան անպահ կը թափին վրաս. Ղօքս  
իմ բնտանի անգէն քաղցր աւազակներ են-  
ամէն օր արշաւանք եւ կողպատուս կրում  
եմ, եթէ այսօր լեցնեմ սենեակս, վաղը կը  
պարպուի. չէ՞ որ այդ ամէն պարապու-  
թեան հետեանք են: Աստուծոյ սիրոյն լի-  
նի Արբազան Տէր, թոյլ տուր որ Սիօն հը-  
րատարակուի թերևս ասոնք զբաղանու-  
թեամբ պարապին եւ եւ ազատուիմ: Ապա  
թէ ոչ այժմէն խօսիմ քեզ, Տէր Հոգեւոր,  
իմ կարծուած հարստութիւնս բոլոր կ'ու-  
տեն այդ բնտանի բարեկամներն եւ ոչինչ  
ժառանգութիւն չի մնար վանուց, թող գիտ-  
նայ բոլոր Միաբանութիւն թէ այս այս-  
պէս է. եւ դուք գիտէք որ շատ անկեղծ  
մարդ եմ. սիրտս եւ լեզուս նոյն է:

Խօսք Հայոց Հայրիկին է.

Ա՛հ Տէր Մամբրէ Արբազան, ա՛հ այս  
հինգ հարիւր բուրլին, տար այժմ Տէր Յա-  
րութիւն Արբազանին, յայտարարէ բար-  
ձրաձայն, որ մի բարեպաշտ անձն նուիրած  
Սիօնի հրատարակութեան համար եւ խոս-  
տանում է տարուէ տարի վճարել նոյն  
գումար:

Վերջարան Յարութիւն Արբազանին է:

Ապրի՛ս Տէր Մամբրէ Արբազան. տե-  
սա՛ր մի գործնական բան. ամէն գործ  
պէտք է այսպէս վճարել, օգին մէջ երե-  
ւակայութեամբ աշտարակ չի չինուիր. կ'ե-



րեի որ այդ երևակայող Հայրիկ, վերջի-վերջոյ համագումար է, որ լոկ խօսքով փրուա չի եփուիր:

Գոչեցէք ուրեմն, կեցցէ՛ Հայոց Հայրիկ, բարեկամ երուսողէմի. ազօթենք նորա կենաց համար որ մնայ այնպէս մինչև ցմահ, և այս իւր սուրբ օւխտն է. վկայ՝ Աւետեաց Երկրի Հրախրակն է:

Է՛, լսեցէ՛ք եղբարք, այս շնորհ միայն Խրիմեանին չէ. կեցցէ՛ և աւելի ևս կեցցէ Տէր Յարութիւն Սրբազան, որ քաշելով քաշկոտելով բան բերաւ մինչև այստեղ. կեցցէ՛ ուրեմն նաև գործնական յառաջդիմութիւն և նախահաշիւ տնտեսութիւն:

Օ՛ն կանչեցէ՛ք դաւազ, թո՛ղ կառք պատրաստէ, հիմա կ'երթամ փաշայիս արտօնութիւն կ'առնեմ, և Սիոն առօք փառօք կը հրատարակուի:

Ատեան փակուած է. հայտէ Հայր Անդրէասին սենեակ, խմենք ուրախ լինինք և օրհնենք Հայրիկի կեանքը:

Հրահանգ. առանձին կարգա այս մասն. Ձեզ կը թողում Հայր Մամբրէ, որ Սահակ եպիսկոպոսին և Հայր Ղեոնդին հետ խորհրդակցելով այս նամակի ընթերցումն փոքր ինչ հանդիսապէս լինի, հրաւիրելով Միաբանական դասէն մի քանի կարևոր եղբայրներ: Եւ դուք պէտք է յայտարարէք կանխաւ թէ Հայրիկէն մի կարևոր թուղթ կայ, պիտի կարդամ, և այլն: Բայց չի մոռնաք, Հայր Ղեոնդէն հինգ հարիւր բուրլին կանխապէս առնելով ձեր քով պատրաստ լինի, որ այն վերջի կէտին զրնէք Պատրիարքին ձեռք. այդ է միայն որ հաստատում է նորա գործնական հաւատքը:

Վա՛յ Հայրիկի բախտին, որ թափեց աչքի լոյս և զրեց այս նամակը իւր այնչափ զբաղմանց մէջ:

Եթէ տակաւին չյաջողի բան, և զուգիտե՛ս, զքեզ և երեքին բարեկամներդ (\*) պատասխանատու կը ճանաչեմ:

(\*) Ստեակ եպ. Խազայեան, Ղեոնդ Վեդ. Մամուսեան և Անդրէաս Վեդ. Միլզոյեան:

Մ. Խ.



# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ՎԱՐՔ ՄԱՇԹՈՏԻ

ՈՒՂՂԵԱՒ ԵՒ ԼՈՒՍԱԲԱՆԵԱՒ

Ներածութիւն

— «Սքանչելին» կորուսն հին հայ մատենագրութեան երկնքին վրայ ամէնէն մեծափայլ պայծառագոյն լուսաւորներէն մէկն է, և նոյն իսկ՝ կրնայ ըստիլ ինչ ինչ նկատումներով՝ ամէնէն նշանաւորը: Միանգամայն ամէնէն խորհրդաւորը՝ բացառութեամբ միշտ Խորենացիի:

Իր ծննդեան ազգութիւնը, իր կեանքը, իր աստիճանը, իր գրական արգասիքը իր ամբողջութեան մէջ, իր մահը և մահուան թուականը առեղծուածներու շարք մը կը ներկայացնեն, և լի են տարօրինակ հակառութիւններով:

Այն մի քանի հակիրճ տեղեկութիւնները, զորս ունինք իր վրայ, ամբողջը իր զրչէն են, բացի Փարպեցիին յիշած մէկ փոքր մանրադէպէն թէ ի՛նչպէս կորուսն և Արձան իրենց ուսուցչին Մաշթոցի հետ միասին՝ իրենց աշակերտակից Ղեոնդի վրայ, ասոր քուն տտենը, վրան սաստիկ լոյսի մը ճառագայթելը տեսան ցերեկ տան, նախազգարար նշան թէ նահատակուելով պիտի հանդիպէր իրեն վախճանը:

Վրացի ծնած ըլլալը ինքն կը յայտարարէ, և սակայն «բարբարոսական կողմանք» կը կոչէ Վրաստանը: Մաշթոցի աշակերտներուն կրտսերագոյնը կը դաւանի ինքզինքը (անշուշտ կրտսերագոյն լոկ տարիքով փոքր չի նշանակեր անպատճառ, այլ աստիճանով, կարողութեամբ, տաղանդով փոքր ալ կ'իմացուի, համեատութեամբ ըսուած, ինչպէս «ես տրուպո», «ես նրւատո», «ես անտրմանս» եւ այլն, խոնարհամիտ ասացուածները), և սակայն այս կրտսերագոյնին կը տրուի հրաման հայրապետէն՝ միւս աշակերտակիցներուն համախոհութեամբ և քաջակերութեամբ՝ զրելու իրենց հոյակապ ուսուցչին կեանքը, թէ՛ Յովսէփինքը՝ «գլխաւոր աշակերտ» Մաշթոցի յա-